


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 7 ԵՒԻ ԵՈՐԲ, ԴԵԿՏ. 25, 1897 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ԱՉԳԱՅԻՆ

Անցեալ շաբաթ երեկոյ տեղի ունեցաւ նոր Հոգաբարձութեան ընտրութիւնը...

- Ս. Մաշթոց վարդապետ տեղական գործերու պատճառաւ չի կրնալ ընտրուիլ...

Կիրակի օր Արժ. Տ. Վաղինակ Վ. Ս. Պատարագ մատոյց և քարոզ խօսեցաւ սովորական եկեղեցւոյ մէջ...

Ուրիշ անգամ մը Ն. Արժանապատուութիւնն, քարոզին մէջ, քաղաքիս Հայ ժողովուրդը նամեցուց ձկնորսի մը...

Կիրակի երեկոյ ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ Ինտիֆէստիստներու մէջ...

Կանուխեան: Նորին Արժ. մասնաւոր ուշադրութիւն հրաւիրեց ազգային անկերպարան վիճակին վրայ...

Երեքշաբթի երեկոյ Տ. Վաղինակ Վ. նորընտիր Հոգաբարձութեան անդամներն իմի դումարեց, անոր դիւանընդ կազմեց գաղտնի քուէարկութեամբ...

ՀԵՌՈՎՐԱԿՈՒՐ

ՏԱՅԻՆ ՈՒ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Ամսոյս 21ին Կ. Պօլսէ առնուած հեռագիր մը կը պատմէ թէ Ամերիկեան զբոսանալու մը, Պանքրօթ, Չիկագոյ հասած ատեն Եֆեմիլի վարդապետին ներս մտնել: Այս դէպք տեղի ունեցած է ամսոյս 4ի երեկոյին: Պանքրօթ երբ կը մօտենայ նաւահանգստին, պահականցին կը կրակեն իր վրայ: Ծովակալն նաւակ մը կը դրկէ՝ պահականցին բացատրութիւն պահանջելու համար: Նաւակին վրայ ալ կրակելով ևս կը դարձնեն զան: Ծովակալը կը բողբէ Ամերիկեան Դեսպանատան միջոցաւ, ու ինչորոշ բանակցութեան նիւթ կը գտնեայ երկու կողմերու թեմանց միջև: Վերջի հեռագիրն կը ծանուցանէ թէ Թուրք կառավարութիւնը գոհացում տուած է Ուաշինգթընի պահանջներուն՝ ներողութիւն խնդրելով այս ցաւալի միջադէպին համար, և պաշտօնագրով ընկելով երկու թուրք պաշտօնեաներ: Մ. Նահանգաց այս մեղմ պահանջը կատարելէ աւելի ինչ կայ հեշտ Տաճկին համար՝ այս օրինակ պարագայներու տակ: Եւրոպական պետութեանց անկ է արժանի փոխարինութիւն մը պահանջել այսօրինակ նախատանց համար:

Վլատիվոսթօքէ առնուած մի հեռագիր կը ծանուցանէ թէ Ռուս կառավարութիւնը Միացեալ Նահանգներէ գնած է մեծաքանակ ռազմամթերք և առատ պաշար բանակին համար:

ՕՐՈՒԱՅ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկնաւոր Կայսրութեան երկրաւոր վիճակը ողբալի և յուսահատական է. Երկնքի ներկայացուցիչ Չին Կայսրին խորհրդատուները, նոյն իսկ անցեալ օր, կը համոզէին զինքը, որ իրեն համար շատ աւելի ապահով պիտի ըլլայ եթէ չինական հողաթափները հազած վար իջնէ ամպերու մէջ հաստատուած գահէն, ու երթայ երկրիս չինական մէկ անկիւնը մազ մը տեղ գրաւէ նստի, մինչև որ Վիլհելմ և Նիքօլա Կայսրերը իրենց ուզածնուն շափ Չինական երկիրները առնելէն վերջ, իրեն յատուկ տեղ մը որոշեն իրենց տիրապետած սահմաններէն դուրս: Բայց կարծողներ կան որ երբ Անգլիոյ Շնորհալի Թագուհին ալ ուէն «Պղտիկ» մաս մը երկնքի թագաւորութեան հողերէն, չինացի կայսր պիտի արուի ամպերու բարձունքէն վեր աթոռ մը, ու յաւել իրապէս պիտի հռչակուի «Երկնքի Կայսրը»:

Գերմանական նաւատորմի զորքէն գրաւած է չինաստանի գլխաւոր նաւահանգիստներէն մին, ՅՕ-ՉՈՒ, և Գերմ. զորքերը անոր ետի ցամաքներուն վրայ պարզած են Գերմ. դրոշակը: Աքիլէսի և Տրոյատի յաջողութիւնը, դարուս Բիւրցազն, Վիլհելմի եղբայր Հէնրի Իշխանն ալ առջի օր մեկնեցաւ ուրիշ նաւատորմի մը հետ, օգնելու համար առաջին նաւատորմին, որն այնքան ահուկ ու մեղադրութիւններէ վերջ, կրցած էր չինական անպաշտպան բերդերը կործանելու, հսկայ չինացիներուն դէմ կուռելու: Հէնրիին ոչ թէ միայն կը տանի հետը թուրքերու սրահներու կապարձ, չինական Պատին տակ չինացի հերոսներուն կուրծքերը մխելու համար, այլ իւր կէս-արքայական շրթներուն վրայ կը կրէ թոյնի հիւթ մը, որ քաղած է երբ չը մեկնելէ առաջ, Պիզմարքի ճակատին դրոշմեց ջերմ համբոյրներ, ըսելով, «Կը համբուրեմ այն ճակատը որ մեծ Հայրըս այնքան համբուրած է...»:

Չարի կառավարութիւնը կանխաւ պատուոյ խօսք տուած էր թէ Գերմանները եթէ չեն քաշուիր Չինական երկիրներէ, ինքն «ակամայ» պիտի զբաւէ ուրիշ նաւահանգիստ մը և երկիրներ վիթխարի Կայսրութեան: Փորթ Առթըր նաւահանգիստը, որուն

ձաբ-նցիները արիւնով տիրացած էին վերջի պատերազմին մէջ, և որն Ռուսական սուլտանացուցանելու տակ վերադարձուցին Չինաստանին, Ռուս կառավարութիւնը ամենէ յարմար ձեւով մեռուան բնակարանը ընտրեց վերջի օրերս՝ Ռուսական նաւատորմի մեկ բաժնին: Բայց Ռուս նաւատորմի զայնտեսակ հիւր մըն է, որ արիւնալի պատերազմի մէջ պարտուելը միայն կրնայ հեռացնել զինքը Փոթի Առթըրի շուրթերէն:

Չինաստանի մէկ մասը այժմ Գերմանացիներու և մէկ մասն ալ Ռուսներու ձեռքն է. ահա այս է չոր և ախուր իրականութիւնը. եթէ մութ խնդիր կայ թէ Չին Կայսրին, թէ երկու Կայսրերուն և թէ մեզ համար, այն ալ այս է թէ Անգլ. Թագուհին աւելի ո՞ր մասը պիտի ուզէ ունենալ իւր շնորհալի թագաւորութեան տակ: Վաղիոյ բաժնը Ռուսիայի աւելցուելը պիտի ըլլայ: Գանի մը օրէն այս ալ կը յայտնուի:

ԱՉԳ ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ 2 ԴԵԿՏ. 1897

Սիրելի Հայրենակիցներ՝ Ժամանակէ մը իվեր գրեթէ ամբողջ Հայ ժողովուրդը համոզում գոյացուցած է թէ՛ Հայկական հարցի գերագոյն շահերը կը պահանջեն յիշատակական կուսակցութեանց ՄԻՈՒԹԻՆԸ:

Մենք ժամանակին անձամբ տեսանք և համոզուեցանք թէ որոնք են որ դիմակներու տակ կուզեն ժողովուրդ խաբել և արգելք հանդիսանալ ՄԻՈՒԹԻՆԸ: Ուստի մեր սրբազան պարտականութիւնը կատարելու համար ամեն ինչ մանրամասնօրէն ամփոփեցինք ԴԻՄԱԿԱՆՈՒՆԵՐԻ անուանով գրքոյի մը մէջ:

Կամքերնէս բոլորովին անկախ պատճառներով մեր գրքոյի հրատարակութիւնը քիչ մը ուշացաւ. այժմ մամուլ տակէ, և քիչ ատենէն լոյս պիտի տեսնէ:

ԴԻՄԱԿԱՆՈՒՆԵՐԸ ձրի կը դրկուի, ունենալ փափաքողներ կրնան դիմել մեր հասցէին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ.ՃԻՀԱՆԿԻՒՆԻԵՍԱՆ ՓՕՍԹ՝ ՌԷՍՍՈՒՆԸ, ԱԼԷՔՍԱՆՏՐԻԱ, ԷՃԻՊՏ

ՆԱԻԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

- Ուրբաթ հասաւ, ՓԱԼԱԹԻԱ, Համպուրկէն, Շաբաթ կը հասնի, ԲԷՅՍՊԻ, Անվէրսէն, Կիրակի կ'սպասուի, ԼԱ ՔԱՆՓԱՆԵԸ, Հայրէն:



ՇԱՌԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի մէջն Ծարաթ օրեր ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմէն:

Թ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳՆԱԶԱՊԵՏ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ՝

Տարեկան	ՏՈՒ	Սէնթ
Վեցամսեայ	1	50
Եռամսեայ		75
		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 10 Փր. Բաժանորդագրին կանխիկ է: Հասցէ՝

To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ԴԵԿՏ. 25, 1897.

ԱԶԳ

Մեր աշխատակիցներէ կը խնդրենք որ իրենց յօդուածները թուղթի մէջ Երեւան վրայ միայն և յստակ գրեն: Ծածկանուն գործածողներն իրենց անունները զրկելու են մեզ, որպէսզի կարենանք իրենց նամակները հրատարակել:

Թղթակիցք թող հաճին իրենց նամակները հինգշաբթի օրերն մեզ հասցունել:

ՈՍՏԻԿԱՆԸ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ

Անցեալներն լսեցինք թէ Հայ մը քաղաքիս զխաւոր փողոցներէ մէկին վրայ, գիշեր ատեն, ոստիկանէ մը կողովուորած է եղեր: Հաւատ չընծայելով այս լուրին՝ չուզեցինք հրատարակել, բայց վերջէն ստուգելով գտանք թէ իրօք պատահած էր մի այդպիսի միջոցէկ, որոյ մանրամասնութիւններն դեռ անծանօթ կը մնան մեզ: Պատմութիւն նայելով այս խաղաղութեան պաշտօնեան անըզու Հայուն ժամացոյցն և դրամն յափշտակելով կառք մտած ու հեռացած է, իսկ կողովուորակն՝ առանց իսկ բողոքելու գացած է՝ կարծելով թէ վտանգաւոր ձեռնարկ մ'էր ոստիկանի մը դէմ բողոքելն, և թէ պաշտօնեայք հոս ալ ազատ էին "կողովուորակ գեղաքացին":

Արդարեւ մենք չատեր երկար ատեն բռնութեան տակ ապրած ըլլալով՝ շատ անգամ ոստիկանի մը անունէն կը սարսափին տակաւին՝ կարծելով թէ այդ հասարակաց ու խաղաղութեան ու խաղաղութեան պաշտօնեաներն ժողովրդի տէրերն ու ինքնազուրկ իշխաններն են հոս, որպէս ի թուրքիս: Բայց քաղաքակրթեալ երկիրներու մէջ, ընդհակառակն, ոստիկանն հասարակութեան ծառան է և անոր խաղաղութեան պահպանողը: Օրէնքը, որով կը կառավարուի այս երկիր, խիստ է յանցաւորին համար, բայց շատ աւելի խիստ է այն յան-

ցաւորին, որ վարձակ է ժողովրդին մէջ գտնուած փաստակար տարբերք արդարութեան առջև բերելու համար: Եթէ ոք օր մը ներկայ գտնուի ամբաստանած ոստիկանաց դատաքննութեան, պիտի տեսնէ թէ ո՞րչափ ծանր է այդ ազատ ու անկախ կարծուած կապոյտ-գեղատ պաշտօնէկց պարտականութիւնն օրինաց և քաղաքացիին առջև:

Ոստիկանութիւնն ֆաղաքացիտի կողմէ կարգեալ Յանձնարարի մը ձեռք կը կառավարուի, որ լիազօր իշխանութիւն ունի դատել, պատժել ու պաշտօնէ ձգել յանցաւոր պաշտօնեայն, ինչպէս նաև վարձատրել, բարձրագոյն պաշտօններու կոչել և քաղաքակրթ արժանաւորներն: Եւ բընականաբար դիրքին է սա հետևութեան գալ թէ ոստիկան մը Պօստին առջև ամբաստանուելէ և դատուելէ աւելի բանէ մը չի վայնար բնաւ: Գործարանի մը խստապահանջ պաշտօնէի հրամանին տակ գործելու չի նմանիր ուստիկանի մը պարտականութիւնը. անոր ոսկեզօծ կոճակներուն տակ փուշեր կան պահուած:

Իրաւ է որ քաղաքացի մը իրաւունք չունի ոստիկանի մը գործին խառնուիլ, երբ այս վերջինն իւր պաշտօնն կատարելու վրայ ըլլայ, բայց երբ նա ապօրինի ընթացքի մը մէջ գտնուի, ամէն անհատ իրաւունք ունի բողոքել անոր դէմ ոստիկանական յանձնարարին (Փօլիս Պօստ) առջև՝ և օրինաց գործադրութիւնն պահանջել: Երբ քաղաքացին թերանայ իր այս արդար իրաւանց մէջ, որ պարագ մ'է միանգամայն ընկերութեան առջև, մեծագոյն սխալն գործած կըլլայ իր խղճին և իրաւանց դէմ: Աստուածահալ գործարանատիրաց դէմ եթէ Հայը միջոց մը չունի ինքզինքը պաշտպանելու, բայց ոստիկանական անխիղճութեանց առջև օրէնքն ունի իրեն պաշտպան, որոյ առջև հոս հաւատարմ են մարդիկ:

Կը մտախնայ սակայն որ մեր ազգայինք բնաւ գործ չունենան ո՛ր և է ոստիկանի հետ, բայց հակառակ պարագային քաղ զիտնալու են թէ ոստիկանի մը յանցանքը չարաբարանար՝ պաշտօնեայ մը եղած ըլլալուն համար: Պաշտօնը երկուստեքործի մը մեղքը զօրոյն վարագոյր մը չէ երբէք: Ոստիկանութեան Յանձնարարին դռներն բաց են ամէն անգամ տանողի համար, լինի նա քաղաքացի կամ այլ երկրի հպատակ:

Մեր հայրենակիցք, մանաւանդ նորեկներն, գիտնալու են քաղ թէ այս երկրի մէջ օրէնքն է կը կառավարէ, և ո՛ր թէ այս կամ այն էֆէնտիին քմահաճոյք:

ՊԱՏԱՍԽԱՆ

Արժ. Տ. Վաղինակ Վարդապետ կը գրէ մեզ հետեւեալը.

Սուրբ Երկաթ ստորագրութեան տակ "ինչ ընելու ենք, ինչպէս ընելու ենք, և ո՞վ պիտի առաջնորդէ մեզ, երբ արդարացի հարցեր կուղղուէին ինձ պատուական լրագրոյց միջոցաւ, որոնց համառօտակի պատասխանել պարտականութիւն կըզգամ:

Հարց—Ինչ ընելու ենք: Պատ.—Խօսելէ աւելի, յամենայն պարագայս, խորհիլ. անօգուտ քննադատութիւնէ աւելի տրամախոհութեամբ ուղիղ դատել, միով բանիւ

մարդկային պարտուց և իրաւանց ճշգրիտ գիտակցութիւնն ունենալու ենք:

Հարց—Ինչպէս ընելու ենք: Պատ.—Դատաւորին և աշակերտին, հօրն և զաւկին, գիտունին և ազէտին, գորապետին և գիտնորին մէջ բնական եղած իրաւանց և պարտուց տարբերութիւնը ճանչնալ, խոստովանիլ և ըստ այնմ ապրելու ենք: Ինչ որ Աստուածային, բնական և քաղաքական արդար օրինօք սահմանաւորուած են՝ միոյն պարտքը միւսին իրաւունքը լինելով: Զի մին ուսուցանելու և հրահանգելու պաշտօն ունի, միւսը՝ ուղղելու և համակիրակելու. ապա թէ ոչ ո՞ր կը մնան դաստառի պաշտօնին վեհութիւնը, և աշակերտի սորվելու պարտականութիւնը. ու՞ր գորապետին ու գիտնորին զանազանութիւնը. ու՞ր գիտնականին և ազէտին անհուն տարբերութիւնը: Հետևապէս իսկական ազատութիւնը օրինաց համակիրակելու մէջ միայն կարելի է գտնել: Ազատ երկրի մէջ բնակելով՝ օրինաց դէմ գործելու, ազատութեան դէմ մեղանշել և գայն սրբապղծել է:

Հարց—Ո՞վ պիտի առաջնորդէ մեզ: Պատ.—Գրուի մը, որուն օժանդակէ իւրաքանչիւր ազգային անհատ իր նիւթական և բարոյական կարողութեամբ: Երբ ոտքը՝ գրուի, ձեռքը՝ աչք ըլլալու կը նկատի, սոյն անրնական հետևանք անկապակցեալ գըլլալով անհնար է առաջնորդուիլ:

Ինչ օգտուէս արդիւնք կարելի է սպասել երբ խոհական դաստառուն աշակերտող գրուիք պարտուց է. ինչ օգուտ գորապետին հրահանգէն, երբ գիտնորը հնազանդելու սկզբունքը չըզրիւթ որդեգրել: Ինչ օգուտ բազմազգի միջոցով օժանդակելու և զող պաշտօնէն, երբ ժողովրդեան համակիրակելով գործել ծանր գտնէ:

Ուրեմն եզրակացնենք թէ՛ ինչ որ ենք, և ինչ որ պիտի ըլլանք, մեր խելքովն ենք, և պիտի ըլլանք յաւէս:

ԵՍ ՀԱՅ ԵՄ

Եթէ օտարք՝ առաջարկեն զիս ընել իրենց իշխան և թագաւոր պետ ընտրել պայմանաւ որ Հայութիւնն հեռանամ, կամ Հայութեան իմ անունը ուրանամ:

Ես ընտրելով զազգատութիւնն, պիտ' կոչեմ Ես Հայ եմ:

Եթէ ոտքիս առջև թափեն դոհարներ, Ոսկի պահի, թագ, մարգարիտ և գանձեր. Ես թէ անբաւ ոսկի արծաթ ինձի տան իմ ազգութեան և իմ անունն իփոխան

Ես ընտրելով փուշէ պսակս պիտ' ըսեմ Ես Հայ եմ:

Եթէ աշխարհ բոլոր ի մի գումարի, կամ պաշտածս վազէ ոտքիս գայ փարի ինքներն որ գէթ առ երեսու ուրանամ իմ ազգութիւն, որ աշխարհի տիրանամ Ես ընտրելով իմ գերութիւն պիտ' ըսեմ Ես Հայ եմ:

Եթէ զբառնան ինձ շարժարանք խեղճութիւն, կամ շղթաներ, արքսոք ու բանտ գերութիւն. Եթէ կեանքի մէջ փորձեն զրկել զիս լոյսէ՝ կրկին անգամ զԱյն տեսնելու իմ յոյսէ Ես ընտրելով ամէն զրկանք պիտ' ըսեմ Ես Հայ եմ:

Թէ վերջապէս ինձ մօտենայ մահու ժամ, Տեսնեմ աչօք մահու ստուեր, տարածամ: Պիպ' չը մարի սրտիս կրակ, հոգւոյս հուր, Թէ զիւ տանին ի կախաղան՝ մահու դուռ, Կախաղանէն խողովուրդ պիտ' հեգեմ Ես Հայ եմ:

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Բ

—Պատ Մօրկն, Ս. Ոսկերեան և Կեղեցուց կողմէն Նիւ Եօրքի Հայոց թուահամարը խնդրած է Գեր. Վաղինակ Վարդապետէն: Աւելորդ է ըսել թէ Հայր Սուրբը չէ կրցած գոհացում տալ այս խնդրոյն, քանի որ թուահամար մը չունինք տակաւին: —Գանի մը երիտասարդներ մտադիր են գերասանական խումբ մը կազմել Նիւ Եօրքի և շրջակայ հայաբնակ քաղաքներու մէջ Ազգ. ներկայացումներ տալու նպատակով: Այս Պարոնները ընկերութիւն մը պիտի կազմակերպեն և կ'ստանան օրերը:

—Քաղաքիս Սըն լրագրիւրը Պատ. Թարթարին վերնագրին տակ գորաւոր խմբագրական մը կը գլէ Հէրբերտ Հայասանի զրկած թղթակցին նկատմամբ, ծաղիկելով անոր սոյն յայտարարութիւնը որով կը հպարտանայ թէ Եւրոպացիներուն երբէք ոտք չը կրկնանձնօթ Երկիր մը գտած էր Հայաստան սոյնելով:

—Տեղական թերթի մը մէջ "Հայ գաղթականները Թէքասի մէջ" խորագրով յօդուած մը կը կարդանք որ կրկնէ թէ Տիգրանակերտի և Թուրքիոյ այլ և այլ կողմերէն երբ Հայ ընտանիքներ և սաւեցած են Փաթերսընի և Պրուքթի մէջ, թէ այդ կողմի Հայեր ընդհանրապէս կ'զրկուին բամպակի, հեղակացորդներ և բանջարէկէներու մշակութիւնով: Հին Հայերէն մին ունի բամպակի կուտերն զատող գործարան մը, և ուրիշ երբ Հայեր ունին զանազան սպրանց խանութներ: Եօրուածագրին Քրուած նամակներ կը վկայեն թէ Հայք ընդհանրապէս աղէկ վիճակ ունին ի Թէքաս: Աստեղծէ մին զբաժնէ թէ վեց տարի Հիւսիսային Նահանգներու մէջ աշխատելով 300 աօլար աւելցնելէ յետոյ, Թէքաս գաղթած և հոն Ե տարի այդ դրամագլխով աշխատելէ յետոյ 1000 աօլար շահած է:

Սալ ընտրելու գովեստիւք կը խօսի Հայոց մասին, և կը գտնէ զանեք աշխատող, ժուժկալ, խնայող և ժողովրդային ոգիի տէր անձինք, և միանգամայն կը կարծէ թէ 2-300 տօլար դրամագլխով մէկը Թէքասի մէջ կարող է գիրին ապրուստ մը ձարել, ինչ որ շատ դժուարին է ընել ուրիշ կողմեր:

—Ղազար աղա Մշեցի, Պաթու-մէն Նիւ Եօրք կ'սպասուի մօտերս, ընտանեօք հանդերձ:

—Ճրէզնոյէ երեք Հայեր Քլօնտայք գնացեր են ամերիկացիներու հետ. Այս վարջինները չի կրնալով դժուարութեանց գիմանալ, յետոյ դարձեր են, բայց Հայք շարունակած են իրենց ճամբորդութիւնը:

—Ճրէզնոյէ Հայերը այս տարի 1500 թընի չափ շամիչ արտադրած են: —Պոթնոնէ մեզ կը գրեն թէ անցեալներն երկու Հայեր, Սեղրակ և Արիստակէս անուն, որոի կերթան, բայց փոխանակ անտառ մը մտնելու, հասարակաց պարտէզը կընտրեն յարմարագոյն վայրն, և հետևաբար կը ձեռքակալուին ոստիկանութեան կողմէ, ու տուգանք կը վճարեն:

—Վերջերս Ճրէզնօ գնացող Հայ մը անցեալ աշնան այգեգործութեանէն

3000 տօլար, և ուրիշ ազգայիններ 2 հազարէ մինչև 500 տօլար շահեր են:

—Ամերիկեան ընկերութիւն մը Ծրէզնոյի Հայոց համար քարոզիչ մը յատկացուցած է, որուն Հայք տարին իրենց կողմէ 300 տօլար կը վճարեն:

—Պ. Չուխատուզեան երէկ Յօլ Բիվըր գնաց յատուկ գործով:

—Լորէնսի Հայերն ունին յատուկ սրահ մը, որոյ գործածութեան իրաւունքը բաժնած են այսպէս. Շարաթ երեկոյններն Դաշնակցականը կը գործածեն զայն. իսկ կիրակի առաւօններն ժամը 10էն մինչև 12 կրօնական պաշտամունք կը կատարուի. ժամը 12էն մինչև 2, նոր Հնչակեանները կը գումարուին հոն. իսկ երեկոյնան 7էն մինչև 10 լարանի ու գըրադարաւի կը յատկանայ այս սրահ:

—Տ. Մաշիցոյ Վ. Փափազեան ընդարձակ շրջաբերական մը տպել կուտայ մեջ, առանձին թուղթի վրայ, Միաց. Նահանգաց մէջ ցրուելու համար: Այս շրջաբերականի կցուած է Հայրիկի մի Կաթողիկոսական Կոնդակն: ՏԻԳՐԻՍԻ Հետ հաւանականաբար պիտի ցրուենք այս շրջաբերականներն քաղաքիս մէջ:

—Նախկին Հոգաբարձութեան Գեանձապահն Տքթ. Այվազեան հինգշաբթի երեկոյ իւր հաշիւներն յանձնեց Նոր Հոգաբարձութեան:

—Բարեգործական ընկերութեան զիւանք յատուկ նիստ ունեցաւ անցեալ երեկոյ, և որոշեց Ս. Մնուշկի առթիւ հանգանակութիւն մը ընել:

—Փրօֆ. Ելիսեան անցեալ օր Պօթժօն մեկնեցաւ:

—Հայկական Միութեան հին անդամներէն քանինք, Պ. Բիւֆէլանի առաջնորդութեամբ, պիտի դիմեն Ընկերութեան նախագահին, Միութեան վերակազմութիւնը խնդրելու համար:

—Մայիսի 10-ին ազգայիններէն Պ. Սարգիս Բարսեղեան օր թոքախտէ բռնուած ըլլալով զբեթէ մէկուկէս ամիսէ ի վեր անկողնոյ կը ծառայէր, բժիշկներու խորհրդով, անցեալ շաբթու Սթ. Լուիզ ռօգնաւով Հայրենիք մեկնեցաւ:

ԹՂՔԱԿՑՈՒԹԻՒՆ

Լորէնս, Դեկտ. 29

Այս տեղ ալ Ուսթըրի և այլ քաղաքաց նման սկսաւ իրարու ետեւէ բազմանալ Հայ ընտանիքներու թիւը, մէկ կողմէ ալ կապառուին շատեր, և շինք գիտեր թէ ուր պիտի հանգի վերջաւորութիւնը. եթէ այսպէս շարունակուի, հաւանական է թէ մի քանի տարիէն ալ չ'պիտի կարողանանք գտնել Հայեր իրենց մայր երկրին մէջ: Սուլթան Համիտի կոտորածներուն թիւը 100,000 եղաւ, իսկ զաղթականութեան տուած փաստնային չափազանցները: Բայց ցաւալի է միանգամայն ստել որ սա եկող Հայ ընտանիքներին և ոչ մէկը բարեկեցիկ վիճակ մը ունի: Ահա այստեղ է որ Հայ կինը, Հայ օրիորդը՝ խարուած տեսնելով ինքզինք՝ կը պատուէ իւր ամօթխածութեան քօղը և կը դիմէ գործարան պօսերէն գործ խնդրելու, որպէսզի կարող լինի իւր օրապահին հայթայթելու: Անցեալ շաբթուան իրիստ ցուրտ օրերից մին էր, երբ գործարան գնալով տեսայ մի քանի շարաթուայ եկած Հայ կին մը որ եկած էր ամուսնոյն հետ գործարան գործ խնդրելու: Քանի՞ դառն էր գործարան Հայերուս երբ կը տեսայինք ամօթխած Հայ կնոջ կանգնելը և գործ խնդրելը: Այսպէս շարունակեց մի քանի անգամ, բայց ցաւ իսկրտ ապարդիւն անցաւ: Զարմանալի չէ՞ որ այս ամէն վիշտեր ու տառապանքներ, նեղութիւններ և

զրկանքներ կրելով հանդերձ իրականութիւնը չեն գրեթէ Հայրենիք, որ գէթ ուրիշներ ևս չ'գան: Տեղուոյ ժողովուրդը զգալով այս գաղթականութեան փաստը, խօսում ու խորհում է դրա առաջն առնելու միջոցը գտնել: Այս առթիւ կիրակնօրեայ լարանին նիւթ ըրին ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ: Ամսոյս 19ի երեկոյին բացուեցաւ լարանի ժողովը, Հայոց յատկացեալ սրահին մէջ: Իրարու ետեւէ սկսան առնաբաններ ցոյց տալ ժողովրդին գաղթականութեան բազմաբիմ փաստներն:

Պատ. Մահակ Յովսէփեան կը տարբերէր նախորդ առնաբաններէն ալ իր փառքերը ներկայացուց ժողովրդին մանրամասն կերպով: Պ. Պոյսճեան ճարտար կերպով պատասխանեց Պատ. Յովսէփեանի և վերջացուց իր խօսքը յորդորելով որ փոխանակ հոս դալու, Հայրենիք վերագառնանք:

Ժողովը փակուեցաւ ժամը 9ին աղէկ սպաւորութեան տակ:

ԶԱՐԷՆԻ ԵՆԵՐԿԱՐԱՐՆԱՆ

Լորէնս, Դեկտ. 21, '97.

Ամսոյս 8ին, շարաթ իրիկուն քաղաքիս Հայ դերասանական խումբն ներկայացուց Մերենցի Երկունք՝ Ստուսեր, զոր թատերգութեան վերածած էր խմբակաւ Պ. Կիրակոս Միւստեան:

Ներկայացումը բաժնուած էր վեց արարուածի, և տեսեց 3 ժամ:

250 ռոգի աւելի երկուսն բազմութիւն մը գրաւած էր Սիթի-Հօլին թատերասրահը: Հոն կը նշմարուէին նաև օտարազգիներ հանդերձ ընտանեօք, որոց համար յատկապէս Տքթ. Ճէլալեան անգլիերէն լեզուաւ բնմէն կը բացատրէր իւրաքանչիւր արարուածի նիւթը և համառօտ պատմութիւնը, վարդապետացուելէ առաջ:

Ներկայացումը տեղին Հայոց ամբողջ թիւին բաղդատմամբ փոքր էր արդարեւ, մինչդեռ կապառուէր քր խումբը աւելի քաջալերութիւն տեսնէ իր առաջին քայլերուն մէջ, կըսեմ այս, վառնդի թէ և ոմանք 2-3 տարիէ ի վեր խմբին մէջ են, և քանից ներկայացումներու մասնակցելով բուսական փորձատութիւն ունեցած են, բայց կան ուրիշներ ալ որ դեռ նոր սկսած են, այսու հանդերձ յուսացուած էն շատ աւելի շքեղ և զաւ ներկայացումն: Բայր դերասանք, գրեթէ սոս ևս ասարակ յաջողեցան լաւ կատարել իրենց գերերը: Յիշատակութեան արժանի են մասնաւորապէս ՅՈՎԱՆԱՆԸ, ԱՐՄՐՈՒՆԻ ԳՈՒՐԳԷՆ ԻՇՈՒՆԸ, և անոր խօսեցեալն Հեղինէն, ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԸ և որդին ԵՇՈՏ ԻՇՈՒՆԸ, նաև ՍԱՍՈՒՆՑԻ ՔԱՀԱՆԱՆ որ ի վերջոյ ԿԱՌՈՂԻԿՈՒԹԻՒՆ կատարեց, և... թուրք զօրաց կրօնական պաշտամունք կատարել տուող ՀՕՃԱՆ: Յակոբէ անուանէ չեմ յիշեր զանոնք, որպէսզի մի գուցէ իրենց համեստութիւնը վերաւորած ըլլամ:

Ինչպէս ամէն գործ նոյնպէս ալ այս փայլուն ներկայացումն ի հարկէ իր թերի կողմերը ունի, բայց պէտք է խոստովանիլ թէ ներկայացումն ըստ բաւականին լաւ պատրաստուած էր, և գերերն ալ լաւ կատարուեցան. միայն կարգադրութեանց մէջ փոքրիկ թերութիւններ կային, որոց մասին հոս ծանրանալ չարժեք: Անշուտ Պ. Պարպեան նկատողութեան առնելով կը ջանայ ուրիշ անգամ աւելի հեռատես գտնուիլ կարգադրութեանց մէջ:

Թատրոն մեծ դպրոց մ'է որ ժողովրդին թէ՛ միտքը կրթելու և թէ՛ սրտին եռանդը վառ պահելու կը ծառայէ, հետևաբար համակրանք կը

չնորհաւորեմ այդպիսի վտեմ նպատակի համար ծգտող երիտասարդութիւնը. կը փափաքեմ որ Հայ հասարակութիւնը նիւթական ու բարոյական քաջալերութիւն չի զլանայ իւր զարգացման գործին նուիրուած խումբերու: ԶԱՔԱՐ ԱՄԱՍՆՍԻՆ

ՆԱՄԱԿ ՄԱՆՉԵՍԹՐԷՆ (ՄԱՍՍ.)

20. Դեկ. Տեղիս Հայերը շատ փոքր թիւ մը կը կազմեն, գրեթէ 30-40 հոգի. ոմանք կողիկ գործարանները կ'աշխատին, շատ քիչեր բամբակի գործարանները. իսկ 4-5 պողպատաճառի, 2 կոշիկակարի, 2 օտիւրիչի խանութներ և 1 ճաշարան կան Հայու:

Ազգ. ժողովներ շատ քիչ տեղի կուենան. եթէ Անգլիերէն ալ կրնայինք խօսիլ, գուցէ բարձրովն մոռնային Հայութիւնը: Միշտ դէպքեր կը պատահին, որոնց մանրամասնութիւնը զգուանք կը պատճառէ ամեն ազնիւ Հայու: Սուս մը երիտասարդներ սկսած են իրենց ազատ ընթացքով անպատուելի Հայ անունը և Հայու պատիւը. ես չեմ կորող ներկայ նամակիս մէջ նկարագրել այն բոլոր անցու դարձերը, որոնք տեղի ունեցան վերջերս այս տեղ, միայն յիշեմ մէկը. ամսոյս 1 ին, զիւրեք, սենեկի մը մէջ, ուր ներկայ էին 7-8 անձինք, խաղը սկսեց, "չէ՛ պէշները" շուտով կողպատեցին շատերը, շուտով ընկան ախի ու վախի մէջ, անոնց մէջ կը դարձաւ զէպի մէկը, որ խաչապող կ'անուանէին, և որն մի քանի օր առաջ Տանկատանէ սպրանք բերած էր ծախելու ըսաւ քանի որ դուն խաղին չես մտնակցիր, 25 Տօլ. ի գումար մը փոխտուր, ահա քեզ 400 Տօլ. Չէք մը, վարդապետաճառ կը վճարեմ. Սաչապողը իսկոյն վճարեց, հակառակ խաչապողի ուրախութեան, 25 քը կեղծ էր, բայց պարտը օգտուելով անոր աղխտութիւնն, կորցեց 25 Տօլարը: Վերջապէս չէ՛ պէշները տխուր յիշատակներ թողուցին ...

ԱՒՏՕ ՆԵՐԿԱՐԱՐՆԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԻՉՄԻՐԻ ՄՕՏ
Կ. Պօլսէ տունուած վերջի հեռագիր մը կը ծանուցանէ թէ անցեալ չորեքշաբթի օր երկրաշարժի ցնցումներ տեղի ունեցած են Իզմիրի մօտերն՝ բազմաց մահ, և ընչից մեծ փաստ պատճառելով:

ՀԱՆԵԼՈՒԿ

- ... ամէն մարդ ունենալու է .
- ... ձիւնթացի հրապարակ .
- ... ամէն մարդ ունենալու է .
- ... անտական մը որ կը նշանակէ պղտիկ .
- ... բոս մը որ կը նշանակէ կերպով մը .
- ... Հայերն շատ պէտք ունին անոր .

Գտնել այս պատկասեալ բառերն, որոց սկզբնատառերը կը հեզեն անուն մը որ շատ ծանօթ է մեր ընթերցողաց —ՏԻԳՐԻՍ:

Առաջին վեց լուծողները պիտի ընդունին իրր նուէր երեքական ամիս ՏԻԳՐԻՍ:

Բաղաբաց հեռաւորութիւնն նրկասի պիտի առնենք:

Պատասխաններն թղթատարով զրկուելու են: Լուծողներուն անուններն պիտի հրատարակուին:

ԱՆԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆԻՔԸ

—Ինչպէս եղաւ սա ստամոքսիդ ցաւը:
—Գործ չուենալէս աստին սկսած է աղէկնալ.
—Ինչպէս.
—Բան չեմ ուտեր որ ցաւ ունենամ:

Էրիկը — Ինչ կաիւ և աղմուկ են որ վերջերս կը լսուին մեր գրացիին տունէն,
Կինը — անցեալ օր աղանին ամուսնացուցին:
ՍՈՒԻՆ


ՈՎ ԳԻՏԷ

Ռուբէն Միլաս Պայծառ անուն անձին հասցէն, զոր կը փնտռէ նորեկ Հայ մը: Այս պարոն երբեմն ճաշարան մը կը պահէր Ըսփրինկֆիլտի մէջ ի Մասաչուսէթս:
Լուր տալ Լրագրոյս խմբագրութեան:

ՆՈՐ ՏԱՐԻԻ ԳԱՐՏԵՐ

Մեր ի վաճառ հանած այս տարուան ՆՈՐ ՏԱՐԻԻ և ԾՆՆԴԵԱՆ յատուկ քարդերն, Հայերէն տպագրութեամբ, կը պարունակեն շատ ընտիր ու զարգարուն տեսակներ:
Գներն կը տարբերին տեսակին համաձայն:
Հատը 5 սէնթէ մինչև 20 սէնթ քարտեր ունինք:
Դուրսերէն եկող յանձնարարութիւնք փութով կը կատարուին:
Գիններն կանխիկ են, փոսթի ծախքը գնողներուն կը պատկանի:
Դիմել ՏԻԳՐԻՍԻ խմբագրութեան:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ
9երորդ տպագրութիւն
Մաքուէլ Սըմքըվիւ
Հրատարակիչ



Այս անգլագական գործն կը վաճառուի բաժանորդագրութեամբ միայն. իւրաքանչիւր հատրն կարծէ 2.50է մինչև 4 տօլ, կազմի տեսակին համեմատ: Մէկ հատրնի գինն վճարողի մը կը զրկենք բոլոր հատրններն, պայմանաւ որ մնացեալներուն գինն վճարուի մաս առ մաս՝ ամիսը տալով մէկ հատրնի գինն միայն:
Բացատրութեան պէտք չունի այս համագիտարանն՝ որ կը բաղկանայ 25 մեծագիր հատրններէ, և կը պարունակէ 7000 պատկերներ ու գուռաւոր աշխարհացոյց քարտէզներ:
Թանգարան մը կատարեալ չէ առանց համագիտարանի: Որ և է երկրի, նիւթի, անհատի, և կամ խնդրի վրայ տեղեկութիւն առնել փափաքող մը համագիտարանի դիմելէ զատ ուրիշ կերպով չի կրնար գոհացում տալ իր մտաց: Համագիտարանը ահագին թանգարան մ'է ինքնին: Նոր Տարիի համար ամենէ ընտիր նըուէր մ'է այս համագիտարանն:

ԱՆԴԱՐՄԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ,

(Շարունակութիւն Բ. Թուէն և վերջ)

"Երբ զիս տեսաւ, նուազարանն վար ձգնց ձեռքէն, ու արցունքները սրբելով աչքերուս մէջ նայիլ սկսեց ակնապիշ: Իւր լուսթեամբ կարծես սրտիս հետ կը խօսէր: Մարդուս աչքերը թէև չեն խօսիր բարձրաձայն, բայց անոնց լեզուն ամենէ զօրաւորն է շատ անգամ մահկանացուաց լեզուներուն մէջ: Ինչ որ մարդիկ օրերով չեն կրնար ըսել իրենց ճարտար լեզուով, շատ անգամ մեկ նայուածքով կը բացատրէ: Աչքը սրտի բանալին է: "

"Բիշ վերջ, կարծես շունչ առնելէ յետոյ, քովս եկաւ, ու մազերս շոյելով ձարցուց: "

"Ինչ ունիս, Արմէն, ինչ ու տխուր ես. բայց զիտեմ գաղտնիքդ գոր ինչ պահել կը փորձես: "

"Ինչ գաղտնիք քուրիկս, հարցուցի իրեն: "

"Արմէն, կոյր կը կարծես զիս, ըսաւ. աշխարհիս գիտցածը կը խորհիս որ գաղտնիք մ'է՛ գեռ ինձ համար: Ձէ՛, Արմէն, չէ՛, ձեռնէ աւելի կը հասկնամ իմ վիճակս. թէև համեմատաբար հանգիստ կըզգամ, բայց գերեզմանն մտաէն սկսած եմ տեսնել: Ինծի համար շատ կարճ ժամանակ մը կայ ապրելու ձեզ հետ: Թոքերս մաշած ու լինցած են այլ ևս: "

Պատասխան մը չունէի տալիք: Մարգարիտ իրողութիւններն կը պատմէր: Ձանացի խօսիլ, բայց լեզուս կարծես կաշկանդուած էր բերնիս մէջ: Ինչ կրնայի ըսել զայն միտքարեւոյ համար: "

—Գիտեմ, Արմէն, շարունակեց իր տկար ձայնով, զիտեմ քով թէ զիս սիրելուդ համար սխալ ընթացքի մը հետեւեցար: Դու չէիր գիտէր տակաւին թէ սիրոյ զօրութեան մէջ աշխարհ կը հալի, բայց պիտի գայ օր մը յորում փորձով պիտի սորվիս թէ երբ սիրաւ կը հրամայէ, կամքը չի կրնար ընդիմանալ անոր այդ օրինակ դէպքերու մէջ: "

"Երկար ատեն խօսեցաւ այսպէս՝ հոգնած գլուխը ուսերուս կոթնցուցած: Սիրաւ կը բարախէր կուրծքիս վրայ, որոյ տկար զարկը տխուր ճամբարտութիւն մը կը պատմէր: Խնդրեց որ զինքն իր սենեակը տանիմ, զի անկարող էր առանձինն քալել: Թեքուած մէջ զայն անկողին տարի, ուսկէ վիճակուած չէր իրեն ողջ դուրս գալ նորէն: Այդ գիշերն ուզեց որ իր մահճին քով անցունեմ, խօսիմ և մտիկ ընեմ իրեն: Մինչև առաւօտ խօսեցաւ ու լացաւ: Խնդրեց որ իր մահուանէ վերջ իր ընտրելին գտնեմ և ըսեմ թէ Մարգարիտ մինչև վերջի շունչը սիրեց զինքն ու իւր յիշատակովն ապրեցաւ: "Ըսէ՛ իրեն թող ամբի՛ կեանք մը անցունէ՛, որ կարենամ երկնից դռներն բանալ իր առջեւ: "

Արշալոյսին, երբ ուրիշներ քունէ կարթնանալ, Մարգարիտ կը մօտենար հաւիտենական քունով ննջելու: "

'Ձեռքերս իրեննեուն մէջ առաւ, և՛ աղօթէ ինձ համար՝ ըսելով աչքերը գոցեց: Մահուան ստուերն ինկաւ իւր գէմի վրայ. երբ արեւու առջի ճառագայթներն համբուրել կը ջանային իր գունատ այտերն, Մարգարիտ իր վերջին շունչը փչեց: Ամպոտ առտու մը առաջնորդեցինք զայն դէպի սեւ գերեզման: Հոն վերջի անգամ համբուրեցի անոր անշնչացած պոկուրքեր, ու շուշաններ դրի իր ձեռքերուն մէջ, որք կը հանգչէին անկենդան սրտին վրայ, ուր երբեմն սիրոյ կրակը հրդէ՛ մը յարուցած էր: "

'Դժբաղդ քրոջս թարմ գերեզմանին վրայ անոր ընտրելին ընտանեաց և Հօրս մէջ գտնուած հին ատելութիւնը վերջ գտաւ այդ օր բարեկամաց միջամտութեամբ, բայց այդ հաշտութիւնն շատ ուշ եկաւ փրկելու զՄարգարիտ՝ իմ ԱՆԴԱՐՄԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ...: "

1898—ՆՈՐ ՏԱՐԻ—1898

Տարի մը ևս բոլորեցաւ, և ամեն մարդ նոր Տարին ասնելու կը պատրաստուի: Ամերիկացիք կը սօսեն այսօրը ըստ իւրեանց սոււմարի, և քանի մը օրէն մենք ալ պիտի սօսենք մեր Ծնունդն ու Տարեգլուխն հին տարեցոյցին համեմատ: "

Այս առթիւ Կաղանդի յարմար նուէրներով լեցուցած ենք մեր դեղարանն: Մեր գանազան տեսակ հոտաւէտ իւղերն ու ջուրերն կարելի չէ գնել ուրիշ տեղէ մը մեր որոշած գներով: "

Մեր ձեռքի վրայ ունեցած կարգ մը կաղանդչէք նուէրներու վրայ—ինչպէս են վարդի իւղ, քօլոյն, կանանց և արանց յատուկ սանրներ, ակուայի և մազի վրձիներ, և ուրիշ խել մը սղայոց յատուկ խաղալիքներ—25 և 50 առ հարիւր գեղջ մընել որոշած ենք: "


Ամերիկեան և Եւրոպական դեղերու թարմ և ընտիր հաւաքածոյ մը ունինք միշտ պատրաստ: Օ. Հ. Մալթ Էքսթրաքթը, որ հանրածանօթ է իբր զօրացուցիչ ըմպելի, քսան սէնթի կը ծախենք՝ շիշը: "

Տակառ մը նորուեկեան ձկան իւղ բերել տուած ենք ձմրան եղանակին կարեւոր մէկ պէտքը հոգալու համար: "

ՈՒՆՏՁԸՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ—ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

Թիւ 472 Յրդ Ալիւի, Նիւ Եորք

Հաստատեալ , 1854



Յ Ա Կ Ո Ւ Խ . Խ Է Ր Պ Է Կ Ե Ա Ն .
(Ներկայացուցիչ)
ՈՒՆԻԻԸՄ Պ . ԲԷՕՀՀԸՐ ԵՒ
Ե Ղ Բ Ա Ր Ց ,
Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Բ
Գինիի, Օղիի, ոգելից Ըմպելեաց ևն .
Թիւ 202, 204 ԻՍԹ 29րդ Փողոց,
Նիւ Եորք, Ն . Ե .

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ՛ միայն ընտիր և անխարդախ են, այլ և դիւրամտացելի են ամէն գասակարգի անձանց .

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Բալթի-Ֆորնիաի և տաճկական ամէն տեսակ ուիսքի, օղի, գինի, շամբանիա, մասթիքայ, գարնջուր, պրանտի, ափսինթ և այլն, իրենց ամեն տեսակներովն: Փափաքողաց գներու ցուցակը կը ղրկուի առանց ո՛ր և է ծախքի: Գանձարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգուծութեամբ և փութով: Քաղաքին մէջ ապրանքներն ձրի կը ղրկուին, իսկ քաղաքէ դուրս ղրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է: "

Ըմպելիներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօրմէյլ անաբիթէյլ)

Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք զայնս փոխել, եթէ պակաս ու փաստուած չըլլան: Ըմպելիքներ կը վաճառուին շիշով, կալնով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր: Դիմել յիշեալ հասցէին կամ Յ . Խ . Խ Է Ր Պ Է Կ Ե Ա Ն , 535 ՈՒՆԻՍՏ 57րդ Փողոց, Ն . Ե .

Մ Ի Հ Ր Ա Ն Խ Ա Ր Բ Ո Ւ Թ Լ Ե Ա Ն
Ս Ե Ղ Ա Ն Ա Ռ Փ Ո Ն -Գ Ր Ո Ց
Պատիւ ունի ծանուցանել թէ խիստ աժան կերպով փոխ գրեր կուտայ Պօլոյ և Նարբերդի համար Յարու թիւն է՛՛ Նարբութեան և եղբարց տան վրայ քաղուած, Օսմ. Լիբան 4 տոլար 50 սէնթէն հաշուելով: Իսկ Մալթիաի, Բալուի, Բերբիի, Մեծկերտի, Տիգրանակերտի, Կարնի, Բղիի և Երզնկայի համար դրամ կը ղրկուի մասնաւոր գործակալներու վրայ, Լիբան 4 տոլար 55 սէնթէն: Մարտէյլ և Ալէքսանտրիա (Եգիպտոս) դրամ ղրկողներուն ալ կրնանք Փօխ-գիր տալ: Ուրիշ քաղաքներու համար դրամ ղրկողներն կրնան Կ. Պօլոյ տան վրայ փոխ-գիր առնել և դիւրութեամբ ծախել զայնս վաճառականաց: Մեր հասցէն հետեւին է . Միհրաբ Նարբութեան փ . Օ . ՊՕԲՍ . 470 ՈՒՍԹԱՐ . ՄԱՍՍ .

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՇԱՀԳԱՋԵԱՆ ԵՒ ՍԱՐԱՅԵԱՆ

Թիւ 239 Իսթ 27րդ Փողոց,

Նիւ Եորք:

Պօստ, նախաճաշի հետ հաւկիթ կը տրուի միայն 1.75 տոլար:

Պօստ, նախաճաշը առանց հաւկիթի, միայն 1.50 տոլար:

ՃԷՅՄԸՍ ՍԱԿԸՐ

Վաճառական ամէն տեսակ ընտիր ստուեղէններու, խիստ գոհացուցիչ գներով. Հայ գերազանց կըրնան իրենց ստուեղէնները գնել այս տունէն շատ աժան գներով: 246 Բանալ Ըսթրիթ

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ

239, ԻՍԹ 26րդ . Փողոց, Ն . Ե .

Ամէն տեսակ կօշիկներ թէ արանց և կանաց, թէ աղջիկանց և տղայոց, կը վաճառենք շափաւոր գներով: Կ կարենք ապաւորուած նոր կօշիկներ ու կը նորոգենք հիններն խիստ վայելու կերպով: Ա . ԹՕՓՈՒՉԵԱՆ

ԿԱՂԱՆԴՉԷՔ

Երթամարդէ մը առ Հայ օրիորդ մը և փոխադարձաբար, նոյնպէս մէկ բարեկամին ուրիշ բարեկամի մը նու իրենց ամենէն յարմար, գնահատելի, և օգտակար ԿԱՂԱՆԴՉԷՔ է էլիսա Նաւաֆ և Ընկ. սոյն հրատարակած

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ

ԱՆԳԻՆԵՆ ԼԵՁՈՒԻ

(Կարճ ժամակի մէջ և խիստ զիւրիւր ո՛ւղ Ան Էլիէն սորլիււ միշտ):

Յօրնուած է Գերմանական և Ամերիկեան Մանկավարժական նորագոյն մեթոտներուն համաձայն, և յարմարեցած՝ Մարդկազմութեան և Իմացական Փիլիսոփայութեան նորագոյն պահանջներուն ու Ամերիկայի Հայոց Իմացական կարողութիւններուն և Տեղական պահանջներուն: Կը պարունակէ աւելի քան 3,000 ամենէն շատ գործածուած բառեր, իրենց Ամերիկեան ՄԱՔՈՒՐ Հնչումներովն և Ամերիկեան նշանակութիւններովն: Գիտական բառերու առջև աւելցուած են Գերմանական, Պատմական, Աշխարհագրական, Աստղաբաշխական, Չափաբերական և Ընկերաբանական գաղանգն ծանօթութիւններ: Գինն է \$ 2.00

Ամեն անոնք, որք փութան գնել սոյն գրքէն մինչև Դեկտ. 20, 1897. էլիսա Նաւաֆ և Ընկ. կողմէ պիտի ստանան անն 2րդ, իբրև ԿԱՂԱՆԴՉԷՔ, մէյ մէկ օրինակ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Կը պարունակէ Միաց. Նանահագ Գաղթականական, քաղաքացի լինելու, Գուհարկութեան, Դրամափոխութեան Ամուսնութեան, Ամուսնութեան թղթատարական, Հեռագրական, և վճարագրի օրէնքներն: Կը ցուցնէ դպրոց երթալու միջոցներն, և պատահմամբ փաստաւաններուն Բժշկական Օգութիւններ հասցունելու կերպերն: Կարճէ որ ամեն Հոյ միշտ Ձեռքի վրայ ունենայ Այս գրքոյն: Կը խնայէ ԴՐԱՄ . ԺԱՄԱՆԱԿ, ԿԵԱՆՔ: Սոյն գրքերն ստանալու համար գրիմել առ Բ. Ա. ԿՕՐՍԻԱՆ, 41 East 69th Street, NEW YORK, N. Y.